Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

206
Տ-94
23 SEP 2009

ՔԱՀԱՆԱՅ

АЛЕКСАНДРОПОЛЬ
№ 1533
БИБЛІОТЕКА-ЧИТАЛ
1007/32513

ԱՀԽԱՏԱՍԻՐԵՑ

ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ԵՈՒԵՐ
Տպարան Բ. Տէր-Սահակեանցի
1901.

2 3 APR 2013

2833

Дозволено Цензурою. Тифлисъ, 27-го Апрѣля 1901 года.

Ըստ բարձու հրամանի Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս թոյլատրէ տպագրութիւն երկասիրութեանս, համաձայն գրաւոր վկայութեան Գերապատիւ Տէր Սուքիաս Սրբազան Արքեպիսկոպոսի, որում յանձնեալ էր ի քննութիւն։ Ի ստուգութիւն սորին վաւերացուցանեմք ստորագրութեամբ և դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի։ յ3 Նոյեմբերի 1898 ամի թ. 1281 'ի ս. Էջմիածին։

Դիւանապետ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՔԱՀԱՆԱՅ [1]

Այն ով է կանգնած ամբիոնի վերայ,
Դողդոջուն ձեռներն երկինք ամբարձած,
Դրթառատ աչերն լի արտասունքով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամենքը հայր են անուանում,
Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում։

Քահանայ է նա, քաւող մեղքերի,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաբեր դանձին նա է արթուն դէտ։

Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք,
Եկանք այս աշխարհ լցեալ ցաւերով,
Ո՞վ սրբեց, մաքրեց մեր հին մեղքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Մրտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդրխտի նման ամենից թողած,

[1]) Քահանայ՝ քահէ նա, այսինքն քաւէ նա, քաւող կամ սրբող։ Ժողովրդական բարբառով ասում է կարգաւոր կամ տէրտէր կամ երէց։

Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ՝ երբ մոլորուած գառներու նման
Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւական գրբէն հանեց անարատ.
Կամ՝ երբ մեղսալիր աչքերս բրնաւ
Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
Ումով յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ ըզբաղած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
Արտասունք թափում աչքէն յորդառատ։
Քահանան է այն և միշտ քահանան,
Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ։
Ե՛կ պատուենք, եղբա՛ր, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վերայ
Պատրաստ է հսկել անքուն աչքերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Զուրեց փառք, պատիւ, զրօսանք աշխարհիս։
Քանց սուրբ քահանան էլ ո՞վ է կարող
Արդեօք մեզ համար լինել հայր բարի [1]։

---

[1]) Ռ. Պատկանեան։

Իւրաքանչիւր ծուխ ունի մի մարդ, որ պատկանում է ամբողջ աշխարհի ընտանիքին, նորան կոչում են որպէս վկայ, որպէս խորհրդատու, կամ որպէս գործակալ քաղաքական կեանքի ամենանշանաւոր գործողութիւնների մէջ։ Առանց այդ մարդու՝ մարդս չի կարող ո՛չ ծնուիլ, ո՛չ մեռնել։ Նա է ընդունում մարդուն իւր մօր գրկից և միայն թողնում է դագաղում։ Նա է օրհնում կամ սրբագործում օրօրոցը, ամուսնական առագաստը, մահուան մահիճը, դագաղը և գերեզմանը։ Նա մի հողեղէն արարած է, որին փոքրիկ մանուկները շուտ են ընտելանում սիրել, յարգել և վախենալ նորանից, երբ սխալ բան են անում։ Նոյն իսկ անծանօթ մարդիկ նորան կանչում են *տէր հա՛յր*։ Բոլոր քրիստոնեաները նորա մօտ են գնում և սփռում իրենց սրտի ամենագաղտնի խոստովանութիւնը, իրենց ամենագաղտնի արտասուքները։ Նա մի մարդ է, որ իւր կոչումով հոգու և սրտի, բոլոր թշուառութիւնների մխիթարողն է. պարտաւորուած միջնորդն է հարստութեան և աղքատութեան։ Յաջորդաբար նորա դուռն են բաղխում հարուստը և աղքատը։ Հարուստը այնտեղ ծածուկ իւր ողորմութիւնը ձգելու, իսկ աղքատը այդ ողորմութիւնը, առանց կարմրելու, ստանալու համար։ Նա մի մարդ է, որ չի պատկանում ո՛չ մի հասարակական դասակարգի։ Նա պատկանում է հաւասարապէս ամեն դասակարգի. ստորին դասակարգերին չքաւոր կեանքով և համեստ

ու օրինակելի գիրքով, իսկ բարձր դասակարգերին՝ կրթութիւնով, գիտութիւնով և զգացմունքների բարձրութիւնով։ Դորանով նա ներշնչում է և պատուիրում մի մարդասիրական կրօնք։ Վերջապէս նա մի մարդ է, որ գիտէ ամեն բան, որ իրաւունք ունի ամեն բան ասելու և որի խօսքը ընկնում է բարձրութիւնից իբրև մի Աստուածային պատուիրան . . . :

Այդ մարդը քահանան է։

Քահանան բարոյականութեան ուսուցիչն է։ Նորա պաշտօնը, գործը վսեմ է և սրանչելի։ Նա քրիստոնէութեան և Աստուածային փիլիսոփայութեան քարոզիչն է։ Նա քրիստոսի կեանքի և մահուան պատմութեան ուսուցիչն է, որ անդադար ուսուցանում է քրիստոնեաներին։ Նա Աստուածային պատուիրանների բարձր ուսմունքների դաստիարակն է, որ տալիս է աշխարհին։ Նա հին և նոր կտակարանների լուսաւորող վարոն է, որ լուսաւորում է իւր հօտին։ Քահանան է, որ սուրբ գիրքը միշտ բռնած է իւր ձեռքին, բռնած է իւր աչքի առաջ, բռնած է իւր սրտում։ Քահանան է աստուածային գրքի կենդանի մեկնիչը . . . : Քահանան է, որ կարողանում է ամեն տեղ հսկել, անդադար օր ու գիշեր աշխատել, որպէս-զի աւետարանի ձգած սերմը աճի, ձլի, ծաղկի և պտուղներ տայ։

Այսպէս ուրեմն, երբ տեսնում ես, որ քահանան բռնած է Աւետարանը, նշանակում է նա

իւր ձեռքին բռնած ունի բոլոր բարոյական օրէնքները, բոլոր ճշմարտութիւնը, բոլոր քաղաքակրթութիւնը և բոլոր քաղաքականութիւնը։ Նա է բաց անում այդ գիրքը, կարդում և իւր շուրջը թափում այն լուսոյ և կատարելութեան գանձը, որի բանալին յանձնել է նորան նախախնամութիւնը։ Եւ, Քրիստոսի պէս, նորա վարդապետութիւնը օրինակելի է, թէ կեանքով և թէ խօսքով։ Նորա կեանքը, որքան թոյլ է տալիս մարդկային տկարութիւնը և իւր վարդապետութեան շօշափելի մեկնութիւնը, մի կենդանի խօսք է։ Եկեղեցին պահում է նորան իւր մէջ ոչ այնքան որպէս պատգամ, որքան՝ իբրև օրինակ. խօսքը, երբ նորան պակասում է, եթէ բնութիւնը մերժել է նորան իւր ձիրքը, բայց այն խօսքը, որ ամեն բան լսել է տալիս՝ այդ խօսքը կեանքն է. ոչ մի մարդկային խօսք այնպէս պերճ ու այնպէս համոզեցուցիչ չէ, ինչպէս առաքինութիւնը . . . :

Քահանան գործ ունի մարդկանց հետ, նա է ճանաչում նորանց։ Նա մասնակցում է մարդկային շարչարանքներին, նորա ձեռքը քնքոյշ է և քաղցր, լի խոհեմութիւնով և չափաւորութիւնով։ Նորա պարտաւորութիւնների մէջ պատահում են մարդկային սխալմունք, զղջմունք, թշուառութիւնները, կարիք և աղքատութիւն։ Սակայն նորա սիրտը լի է հաստատութիւնով և համբերութիւնով, գթութիւնով, կարեկցութիւնով, ողորմածութիւնով և ներողամտութիւնով։ Նորա դուռը

'ի ժամու և 'ի տարաժամու բաց է բաղխողների համար, նորա ճրագը միշտ վառ է, գաւազանը իւր կողքին։ Նորա համար ոչ եղանակի լաւութիւն կայ և ոչ վատութիւն, ոչ տարածութիւն, ոչ ժանտախտ, ոչ մահ տարաժամ, ոչ արև, ոչ ձիւն և ոչ անձրև, երբ պէտք է լինում իւր ծխի տունը գնալ և իւր Ստեղծը (ս. հաղորդութիւն) տալ մեռնողին։ Նորա առաջ, ինչպէս և Ստեղծոյ առաջ, չը կայ ոչ հարուստ, ոչ աղքատ և ոչ մեծ ու ոչ փոքր։

Ահա նորա կեանքը . . . , նորա մազերը ճերմակում են, ձեռքերը դողդողում են սկիհը բարձրացնելիս, իւր խորտակուած ձայնը այլ ևս չէ թնդեցնում սրբավայրը, բայց տակաւին դղրդում է իւր հօտի սրտումը։ Նա մեռնում է . . . ։ Եւ նա գնում է հանգստանալու յաւիտենականութեան մէջ, որտեղ առաջ ապրում էր իւր հոգին և նա այս աշխարհում արել է այն ամեն բարիքը, ինչ որ պէտք է անէր. նա շարունակել է մի անմահ վարդապետութիւն. նա ծառայել է իբրև մի օղակ հաւատի և առաքինութեան անչափելի շղթայի մէջ [1])։ Եւ նորա օծուած սուրբ դիակը տրուած է Ստեղծոյ սեղանի առաջ, եկեղեցում։ Այդ քահանան ձայն առած իւր վերջնական մնաս բարևն է ասում. «Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի, ողջոյն քեզ սեղան սրբութեան. ողջոյն ձեզ դասք

[1]) Ա. դը Լամարտին «Nouvelles leçons de littérature française».

քահանայութեան. ես ճանապարհորդեցի առ Արարիչն իմ։ Ողջոյն ձեզ մանկունք եկեղեցւոյ. ողջոյն ձեզ հաւատացեալ եղբարք իմ 'ի Քրիստոս. ողջոյն ձեզ համօրէն ժողովրդականք. ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն։ Ահա հրաժարիմ 'ի քէն սուրբ եկեղեցի, ահա մեկնիմ 'ի ձէնջ սիրելի եղբարք, 'ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Ստեղծոյ մերոյ։ Աղօթս արարէք վասն իմ հարք իմ, եղբարք և որդիք և օրհնեսցէ զձեզ Քրիստոս՝ Փրկիչ մեր, պահեսցէ հաստատուն 'ի հաւատս իւր մինչև 'ի սահմանեալ կէտ կոչմանս այսորիկ և խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ ձեզ՝ յաւիտենից յաւիտեանս. ամէն»։ Եւ սարկաւագը բոլոր ժողովրդականների կողմից խնդրում է. «Միաբան ամենեքեան աղաչեսցուք զմարդասէրն Ստեղծ յաղագս ննջեցեալ քահանայիս այսորիկ։ Սրբասէր քահանայք և բազմամբոխ ժողովուրդք, հայցեցէք 'ի Քրիստոսէ՝ զի շնորհեսցէ սմա թողութիւն մեղաց. զի հանգուսցէ զհոգի սորա յերկնային խորանսն յանսպառ ուրախութիւնսն։ Յառաջնումն համարեսցի զսա ընդ Մովսիսի և ընդ Ահարօնի և ընդ այլ մարգարէիցն։ Յերկրորդումս համարեսցի զսա ընդ Պետրոսի և ընդ Պողոսի և ընդ այլ սրբոց առաքելոցն։ Եւ զաղաչանս մեղուցելոցս ընկալցի 'ի յիշատակ հոգւոցն հանգուցելոց՝ ընդ սուրբսն իւր դասելով, զտէր աղաչեսցուք» [1])։ Եւ այնուհետև

[1]) Մաշտոց։

նորան պառկեցնում են յաւիտենական սառը գերեզմանում...։

Զեղանից ով չի տեսել, ընթերցող եղբայր, ալեզարդ կամ երիտասարդ քահանային համեստ ոչ ամօթխած դէմքով և արտասուալից աչքերով՝ Աստուծոյ տաճարում սեղանի առաջ կանգնած՝ սուրբ և անմահ պատարագ մատուցանելիս։ Ո՞վ չի տեսել նորան բազկատարած աղօթելիս իւր հօտի համար։ Ամենքդ էլ տեսել էք և թէ նա, քահանան, որքան ծանր, վսեմ և սուրբ պաշտօն է կատարում. մկրտութիւն, ամուսնութիւն և այլն։ Նորան տեսնում էք դուրսը փողոցում և տներում շրջապատուած իւր ծխականներով, որոնց հետ շարունակ ս. աւետարանիցն է խօսում և հոգևորապէս մխիթարում նորանց։ Դուք շատ անգամ նորա տունը գնացած կը լինիք և նորան հրաւիրած ձեր տները՝ հոգևոր օրէնքներ կատարելու։ Կամ միթէ քիչ անգամ էք ծունկ չոքել նորա մօտ և արտասուալից աչքերով, խոնարհ ու բէկուած սրտով խոստովանել բոլոր յանցանքներդ և ասել. «Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ՝ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս 'ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ»։ Եւ քահանան առանց բարկանալու, առանց սուր նկատողութիւններ անելու, քաղցրութեամբ ու քնքշութեամբ միտքն ուղղած դէպի երկնային

թագաւորը, հանգիստ հոգւով թողութիւն է տուել և հայրաբար և անկեղծ սրտացաւութիւնով լցուած խրատել՝ ասելով. «Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս. եղիցի քեզ 'ի բարեգործութիւն և 'ի փառս հանդերձեալ կենացն. ամեն»[1]։ Եւ այսպիսով քահանայի պաշտօնն է աղօթել բոլոր հօտի համար, հոգևոր օրէնքներ կատարել և նորանց մի սուրբ կապով կապել Աստուծոյ հետ։

ՔՐԻՀՈՆԱՆԵՐԸ Ո՞ՐՏԵՂԻՑ ԵՆ ԻՐԵՆՑ ՍԿԻԶԲՆ ԱՌԵԼ։

Երբ որ Յիսուս-Քրիստոս մարդկային կերպարանքով, իւր Հօր և սուրբ Հոգու հաճութիւնով աշխարհ եկաւ, մարդկային ազգը փրկելու յաւիտենական կորստից, աշխարհումս հիմնեց իւր Աստուածային եկեղեցին։ Եկեղեցին հիմնեց իւր հաւատացեալների համար, այնպէս, ինչպէս հովիւը շինում է փարախը իւր հօտի համար, նորանց պատսպարելու չար գազաններից։ Քրիստոս հիմնելով իւր եկեղեցին, պարտաւորեցուցիչ դարձրեց բոլոր հաւատացեալների համար, որ նորանք իրենց հոգեկան մխիթարութիւնը գտնեն այդ եկեղեցում։ Այսօր Քրիստոսի եկեղեցին կանգուն է և նորա յաղթական խաչը փայլում նորա գմբէթի ծայրին։

Ամեն մի տուն ունի իւր տէրը, գլխաւորը, ամեն մի քաղաք ունի իւր գլխաւորը, որ ղեկա-

[1]) Ժամագիրք։

վարում է քաղաքային բոլոր գործերը։ Ամեն մի դպրոց ունի իւր ուսուցիչը, տեսուչը և դաստիարակը, որոնք որոշեալ կանոնների համաձայն աշակերտներին դաստիարակելով, կրթելով՝ առաջնորդում են դէպի որոշեալ սահմանը։ Այսպիսով Քրիստոս իւր եկեղեցին հիմնելով աշխարհումս, նորան չը թողեց անտէր, անտէրունչ։ Նա նորա մէջ սպասաւորներ կարգեց, որ բարոյապէս դաստիարակեն իրենց հօտը, առաջնորդեն նորանց դէպի յաւիտենական կեանքի նաւահանգիստը— երկնային թագաւորութիւնը։ Այդ սպասաւորների հօտերին առաջնորդելը, չը թողեց լոկ իրենց կամքին, այլ նորանց ձեռքը յայտնի կանոններ տուաւ, ուղղեցոյց—սուրբ աւետարան, որ առանց մի մազաչափ շեղուելու կատարեն այն, ինչ որ պատուիրում է։ Այսօր Հայաստանեայց մեր ուղղափառ առաքելական եկեղեցին անխախտ կերպով շարունակում է այդ սուրբ աւանդը, պահպանում է իւր հաւատացեալ հօտը և առաջնորդում դէպի յաւիտենական նաւահանգիստը։ Սակայն ովքեր են այդ առաջնորդները և ով նորանց այդպիսի մի պատկառելի և վսեմ պաշտօն յանձնեց։ Դորանք մեր քահանաներն են և նորանց այդ պաշտօնը տուաւ ինքը մեր Տէր Յիսուս-Քրիստոսը։

Քրիստոսի հիմնած եկեղեցւոյ առաջին սպասաւոր-քահանաները, նորա առաքեալներն էին, որոնք հէնց ուղղակի նշանակուեցան Յիսուս-

Քրիստոսից և ուղարկուեցան ամբողջ աշխարհս տարածելու նորա ուսումը, նոր քրիստոնէական կրօնը։ Այդ առաքեալները կատարեցին, քարոզեցին այն, ինչ որ Յիսուս-Քրիստոս էր պատուիրել, առանց մի մազաչափ անգամ շեղուելու նորա տուած սկզբունքից։ Աշխարհիս մէջ մարդիկ, ազգերը մի տեղ չեն համախմբուած, այլ զանազան տեղերում. քաղաքներում, գիւղաքաղաքներում, գիւղերում և այլն և առաքեալները Քրիստոսի պատուէրի համաձայն մտան ամեն տեղ տարածելու նոր հաւատը։ Դորանք մի տեղ երկար չէին կարողանում մնալ, այլ ժողովրդին քարոզելուց հաւատի դարձնելուց յետոյ, իրենց յաջորդ ընտրելով՝ քահանայ էին ձեռնադրում և հօտի դաստիարակութեան և ուսուցանելու գործը յանձնում նորանց և իրենք գնում ուրիշ տեղեր։ Ձեռնադրութեան գործը նորանք դարձեալ կատարում էին Քրիստոսի պատուէրի համաձայն։

Մեր առաքելական ուղղափառ եկեղեցւոյ սպասաւոր քահանաները իրենց սկիզբն են առած մեր Տէր Յիսուս-Քրիստոսից և նորա սրբազան առաքեալներից։ Քրիստոս երբ պատրաստում էր իւր աշակերտներին աշխարհ ուղարկելու, քարոզելու գործը կատարելու համար, ասաց նորանց. «Ամեն իշխանութիւն ինձ տրուեցաւ երկնքումը և երկրումս. ուրեմն գնացէք բոլոր ազգերին աշակերտեցէք» Մատթ. ԻԸ. 18։ Նա չըբաւականացաւ դորանով և աւելացրեց. «Ձշմարիտն եմ

ասում ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքում էլ կապուած կը լինի և ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքում էլ արձակուած կը լինի» Մատթ. ԺԸ. 18։ Այստեղ հայելու նման պարզ ակնյայտնի է, որ Քրիստոս իւր ունեցած բոլոր իշխանութիւնը, արտօնութիւնները յանձնեց Նորանց՝ կատարելու այն, ինչ որ ինքն էր կատարել։ Այսպիսով առաքեալները իրաւունքներ ստացան քարոզելու, բժշկութիւններ, հրաշագործութիւններ կատարելու, մկրտելու, հաղորդելու և այլն։ Առաքեալները նախ քան քարոզելու դուրս գալը հոգևորապէս հաստատուեցան իրենց պաշտօններում։ Քրիստոս ժողովելով իւր աշակերտներին, տարաւ Ձիթենեաց սարը և օրհնեց Նորանց Ղուկ. ԻԴ. 50։ Իւր Համբարձումից յետոյ առաքեալները Նորա պատուէրի համաձայն Երուսաղէմում սպասեցին Ս. Հոգւոյ շնորհքը ստանալու և Համբարձումից տասն օր յետոյ, յանկարծակի մի ձայն լսուեց երկնքից՝ սաստիկ փչող քամու նման և լցրեց այն տունը, որտեղ առաքեալներն էին նստած։ Սորանից յետոյ կրակի նման լեզուներ երևացին և նստեցին ամեն մինի վերայ։ Իսկոյն ամենքն էլ սուրբ Հոգւով լցուեցան և սկսեցին զանազան լեզուներով խօսել։ Սուրբ Հոգւոյ շնորհքն ստանալուց յետոյ, առաքեալները հաստատուեցան իրենց պաշտօններում և իրաւունք ստացան բացի քարոզելուց այլ և հոգևոր օրէնքներ կատարելու։ Առաքելական պաշտօնի մէջ հաստատուելուց յետոյ, նորանք ցրուեցան տիեզերքում՝ ազգերին աշակերտելու և այդ աշակերտուած ազգերի համար մի յայտնի և պարզ կանոն սահմանեց. «Ով որ ձեզ լսում է, ինձ է լսում, և ով որ ձեզ անարգում է, ինձ է անարգում և ով որ ինձ է անարգում, ինձ ուղարկողին է անարգում» Ղուկ. Ժ. 16։ Ուրեմն հաւատացեալ հօտը, աշակերտուած քրիստոնեան անպայման պարտաւոր է սրբութեամբ և ճշտութեամբ լսել իւր քահանային, կատարել նորա ասածները, տուած խորհրդները, որովհետև այդ ամենը Քրիստոսի խորհրդները և պատուէրներն են։ Ուրեմն նորան չը լսողը, չը կատարողը, քահանային չը պատուողը, արդէն դատապարտւում է օրէնքով, որովհետև քահանային չը լսողը, չը պատուողը միևնոյն է թէ Քրիստոսին չի լսում և պատւում, ապա և Աստուծուն։

Առաքեալները, աշխարհումս շատ շատերին ձեռնադրեցին և կարգեցին, որպէս քահանաներ, հովուելու ժողովուրդը։ Այսպիսով երբ Թադէոս առաքեալը, որ Քրիստոսի 72 աշակերտներից մէկն էր, մեր Հայաստան աշխարհը եկաւ և քրիստոնէութիւնը տարածեց, իրեն յաջորդ ընտրեց մեր Աբգար թագաւորի թագ գործող Աղդէին և նորան քահանայ ձեռնադրեց և ժողովրդի հովութիւնը յանձնեց նորան։ Արտազ գաւառի համար ձեռնադրում է Զաքարիային, Աղուանից և Սիւնեաց աշխարհի համար ձեռնադրում է Նստա-

32513
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱ.ՄՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ

Թէոսին, Կեսարիայի համար Անտիոքացի Թէոփիլոսին։ Թադէոս առաքեալի նահատակուելուց յետոյ, Հայաստան է գալիս Բարդուղիմէոսը, որ 12 առաքեալներից մէկն էր և նոյն գործը շարունակում։ Այսպիսով առաքեալներն էլ իրենց աշակերտներին քահանայ ձեռնադրելով՝ կառավարեցին հաւատացեալների հօտերը և աստիճանաբար, այսօր այդ գործը, հասել է մինչև մեզ [1]։

ԱՌԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՆԿԱԽԵԼԻ Է ՓՐԿՈՒԹԻՒՆ ԴՏՆԵԼ։

Չը կայ մի քաղաք, որ իւր գլխաւորը, կառավարիչը չունենայ, չը կայ մի թագաւորութիւն, որ իւր պետը չունենայ։ Չը կայ մի հասարակութիւն, որ իւր դատաւորը չունենայ։ Բայց ինչո՞ւ համար են նշանակուած այդ գլխաւորները, կառավարիչները և դատաւորները։ Առանց գլխաւորների, կառավարիչների և դատաւորների չի կարող կառավարուիլ ոչ տէրութիւնը, ոչ քաղաքները և ոչ գիւղերը։ Դորանց ընակիչներին ուղղութիւն տուողը, ղեկավարողը դորանց գլխաւորներն են։ Ոչխարների հօտը առանց հովուի չի կառավարւում, նորան առաջնորդում է հովիւը և կառավարում հօտը, պաշտպանելով նորան գիշատող չար գազաններից։ Կառավարիչներն էլ ղեկավարում են ժողովուրդը, հասկացնելով օրէնքների զօրութիւնը, նշանակութիւնը։ Եւ այն մարդը, որ զգուշութեամբ և հնազանդութեամբ լսում է այդ օրէնքները և կատարում նորանց, նա արդար և առաքինի մարդ է դառնում։ Սակայն կան և մարդիկ, որոնք ոչ մի նշանակութիւն չը տալով այդ օրէնքներին, չը լսելով նորանց, դուրս են գալիս որպէս խաբեբաներ, սրիկաներ և գողեր և դորանք իրենց գործունէութիւնով որոշւում են խաղաղ ժողովրդից և դատաստանի ձեռն ընկնելուց՝ դատապարտւում են։ Ինչպէս ժողովուրդը կառավարիչներ ունի, ոչխարների հօտը հովիւ, որոնք կատարում են առաջնորդի պարտքը, այնպէս էլ քահանաները Քրիստոսի կողմից նշանակուած են կառավարելու և առաջնորդելու հաւատացեալների հօտը։ Դորանց կառավարութիւնը և ղեկավարութիւնը գլխաւորապէս կայանում է երկու բանում. ժողովուրդը պահելու քրիստոնէութեան մէջ, պահպանելու նորանց գիշատող գազաններից և ապա առաջնորդելու դէպի յաւիտենական թագաւորութիւնը և ահա սորա համար է, որ Քրիստոս ասում է քահանաներին, որպէս մի խրատ իրենց պարտքը սրբութեամբ ճանաչելու և կատարելու համար. «Հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց իւրոց»։ Այսպէս ուրեմն քահանաներին ժողովրդի վերայ կառավարիչ, իշխանաւոր նշանակելուց յետոյ, նորանց պարզ և ակնյայտնի իրաւունքները և արտօնու-

[1]) Այժմ մեզանում բացի քահանաներից կան եպիսկոպոսապետներ, եպիսկոպոսներ, քորեպիսկոպոսներ, վարդապետներ, սարկաւագներ, դպիրներ և այլն, այս աստիճանների և կարգերի հետ ծանօթանալու համար խորհուրդ եմ տալիս կարդալ մեր աշխատասիրած «Կարգ կամ ձեռնադրութեան խորհուրդը» վերնագրով գրքոյկը, որ շուտով կը տպագրուի։

թիւններ տուաւ. կապելու և արձակելու, հոգևոր օրէնքներ և բժշկութիւններ կատարելու և այլն։ Իսկ ժողովրդին էլ պատուէր է տուել անպայման նորանց լսել. «Ով որ ձեզ լսում է, ինձ է լսում և ով որ ձեզ անարգում է, ինձ է անարգում» Ղուկաս. Ժ. 16։ Ինչպէս ոչխարի հօտն է խոնարհւում հովուին և խաղաղութեան մէջ մնում, այնպէս էլ հաւատացեալ հօտը պիտի, Քրիստոսի պատուէրի համաձայն, լսի իւր առաջնորդող քահանային։ Շրջողները քիչ չեն և դորանք արդէն իրենց գործունէութիւնով, իրենց բռնած ընթացքով որոշւում են հաւատացեալ հօտից։ Մեզանից քչերը չեն բաժանուել և ընկել այն աղանդաւորների շարքը, որոնք սուտանուն քարոզներից յափշտակուած՝ բաժանուել են և ընկել նորանց փարախը։ Քրիստոս այդպիսիներին չի ընդունում, նա չի ճանաչում նորանց։ Իսկական հաւատացեալը, ինչպէս ոչխարը ճանաչում է իւր տիրոջը հովուին, այնպէս էլ նա պիտի ճանաչի իւր քահանային, ապա ուրեմն եթէ նա սրտանց ճանաչում է քահանային, ճանաչում է և քահանային ընտրող Քրիստոսին և ապա Քրիստոսին աշխարհ ուղարկող Աստուծուն։ Սակայն քչերը չեն, որոնք սառնասիրտ աչքով են նայում քահանայի, Քրիստոսի այդ անխոնջ մշակի վերայ և դորանք մոլորուած են, դորանց համար փրկութիւն չկայ։ Քրիստոս ինքն է իւր բերանով ասել այդ քահանաներին. «Գնացէք աշակերտեցէք բոլոր ազգերին՝

նորանց մկրտելով Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով» Մատթ. ԻԸ. 19, և այսպիսով չըմկըրտուողների համար յայտնի և պարզ օրէնք սահմանել. «Եթէ մէկը ջրից և Հոգուց չըծնուի, նա չի կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել» Յովհան. Գ. 5։ Նախ քան մկրտուիլը հարկաւոր է ապաշխարել և մեղքերի թողութիւն ստանալ. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կը լինի, և ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքումն էլ արձակուած կը լինի» Մատթ. ԺԸ. 18։ Ապա մեղքերի թողութիւն ստանալուց յետոյ, էլ պէտք է Ս. հաղորդութեան արժանանալ. «Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, եթէ Մարդոյ որդւոյ մարմինը չուտէք և նորա արիւնը չըխմէք, կեանք չունիք ձեր անձերումը։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի և ես յետին օրումը յարութիւն կը տամ նորան, որովհետև իմ մարմինը ճշմարտապէս կերակուր է և իմ արիւնը ճշմարտապէս խմելիք է։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը մնում է ինձանում և ես նորանում։ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը և ես կենդանի եմ Հօր համար, այնպէս էլ նա, որ ինձ ուտում է, կենդանի կը լինի ինձ համար» Յովհան. Զ. 54—58։ Ս. հաղորդութիւնն ընդունելուց յետոյ, պէտք է ամուսնական առագաստի օրհնութիւն ստանալ, ապա հիւանդանալուց՝ հոգևոր բժշկութիւն, Մատթ. Ժ. 8. Մարկ.

ԺԶ. 18 և այլն։ Բայց չէ՞ որ այս բոլոր օրէնքների կատարելը, դորանց իրաւունքները, Քրիստոս ինքն անձամբ անձին յանձնել է իւր աշակերտներին, իւր ձեռքով ընտրած քահանաներին. Մատթ. ԻԸ. 19, Մատթ. ԺԸ. 18, Մատթ. ԻԶ. 26—28, Մարկ. ԺԴ. 22—25, Ղուկ. ԻԲ. 19—20, Մարկ. Ժ. 8, Մարկ. ԺԶ. 18 և այլն։ Քահանային չընդունելով, չլսելով ո՞ւմ պիտի դիմենք մեզ մկրտելու, խոստովանեցնելու, մեղքերին թողութիւն տալու և ս. հաղորդութեան արժանացնելու, պսակելու, հիւանդներին հոգևոր կարգով բժշկելու և այլն։ Ո՞ւմ պիտի դիմենք մեզ պահպանելու, մեզ համար քարոզներ խօսելու, Քրիստոսի խօսքը մեզ հասկացնելու, մեզ առաջնորդելու դէպի յաւիտենական կեանքը, դէպի երկնային թագաւորութիւնը։ Հաւատացեալ եղբա՛յր, այս հարցերին ոչ մի պատասխան չունիմ և ոչ մի բացատրութիւն քեզ տալու, որովհետև ամենը բան հիմնուած է սկզբունքով, Քրիստոսի անարատ ձեռքով։ Եւ քահանային չը լսելով, չը պատուելով, չենք լսում և չենք պատուում իրեն Քրիստոսին։ Քահանայից չը մկրտուելով՝ կարո՞ղ ենք երկնքի արքայութիւն մտնել, մեղքերի թողութիւն չը ստանալով՝ կարո՞ղ ենք երկնքում թողութիւն ստանալ և այլն։ Այդ ամենի համար ինքը Տէրը յայտնի օրէնքներ ունի սահմանած և այդ օրէնքներին հակառակողները ամենքն էլ դատապարտւում են նոյն օրէնքով. Ղուկ. Ժ. 9, Յովհան. Դ. 5, Մատթ. ԺԸ. 18։ Քրիստոս այդպիսիներին չի ճանաչում, դորանց համար յաւիտենական թագաւորութեան մէջ նա տեղ չունի։ Քահանան իւր ձեռնադրութեան իրաւունքներով, որպէս առաքեալների յաջորդ, Քրիստոսի պատուէրի համաձայն իւր հօտը առաջնորդում է դէպի երկնային թագաւորութիւնը, ապա հոգում նորա բոլոր հոգևոր կարիքները, կատարում նորա օրէնքները։ Ապա ուրեմն, եկ պատուենք նորան, լսենք նորան, մկրտուենք նորանից, ապաշխարենք նորա ներկայութեամբ, ս. հաղորդութեան արժանանանք նորանից, մեր ամուսնական առագաստը նորան օրհնել տանք և այլն և այդպիսով միևնոյն է թէ այդ ամենը կատարել ենք տալիս մեր Տէր Յիսուս Քրիստոսին։ Առանց քահանայի մեր կեանքը կեանքի նման չէ, կը լինինք որպէս մոլորուած ոչխարներ, ինչպէս աղանդաւորները, որոնք ո՛չ քահանայ ունին և ո՛չ օրէնք և այնուհետև մեր փարախը չենք գտնիլ, մեր հովուի սրնգի ձայնը չենք լսիլ և ապա չենք մտնիլ և յաւիտենական կեանքը։ Առանց քահանայի անկարելի է փրկութիւն գտնել։

ՔԱՀԱՆԱՅԻ ՅԱՆՑԱՒՈՐ ԼԻՆԵԼԸ ՉԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ։

Աշխարհիս բոլոր մարդիկն էլ Աստուծոյ առաջ յանցաւոր են։ Աշխարհումս առանց որ և է յանցանքի մարդ չը կայ։ Մենք ամենքս էլ ծնուած ենք յանցանքի մէջ։ Դաւիթ մարգարէն է ասում.

«Անօրէնութիւնով յղացաւ և մեղքի մէջ ծնեց ինձ իմ մայրս» Սաղմ. Ծ. 6։ Աշխարհումս միայն սուրբը, անմեղը մեր Տէր Յիսուս-Քրիստոսն էր և մեր եկեղեցին նորա համար երգում է. «Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս-Քրիստոս»։ Այսպիսով չը նայելով, որ քահանան սուրբ, վսեմ և անարատ պաշտօնի տէր է և ամենի գլուխ, նա էլ յանցանք ունի, ինչպէս բոլոր մարդիկը։ Քահանաներն էլ, ինչպէս մարդիկ, մէկն աւելի յանցանք ունի, իսկ միւսներն աւելի քիչ։ Մէկը մարդկային թուլութիւն քիչ ունի, իսկ միւսներն աւելի։ Թէև քահանան էլ ունի յանցանք, գուցէ և մասամբ աւելի շատ, քան մի որ և է հողեղէն արարած, այնուամենայնիւ, այդ որ և է կերպով չի խանգարում մարդկանց փրկութեան գործին։ Եթէ ենթադրենք, որ աւելի լաւ կը լինէր, որ սուրբը, մաքուր (առանց մեղքի) քահանաները ծառայէին մարդկանց փրկութեան գործին, այն ժամանակ ոչ ոքի էլ չէինք գտնիլ այդ գործին ծառայելու համար, որովհետև աշխարհումս սուրբ և անմեղ, ինչպէս մարդ, այնպէս էլ քահանայ չէինք գտնիլ։ Պէտք է աչքի առաջ ունենանք և այս հանգամանքը, որ քահանաները մարդկանց փրկութեան գործը յառաջ են տանում, ոչ թէ իրենց փիզիքական ոյժերի համապատասխան, այլ այն շնորհի թելադրութեան—, որ ստացել են Աստուծուց ձեռնադրութեան ժամանակ։ Իսկ Աստուծոյ շնորհը, մարդկային ազգն ազատող—փրկարար շնորհը բոլոր քահանանե-

ը, իրենց կարողութեան համեմատ հաւասար կերպով են ստանում և նա երբէք չի պակասում կամ հեռանում նորանից, երբ քահանան իւր մարմնական թուլութեանը չը դիմանալով՝ ընկնում է որ և է յանցանքի մէջ։ Խնդիրը մնում է միայն գործադրութեան մէջ. մի քահանայ այն երկնային պարգևը աւելի արդիւնաւորութեամբ է շահագործում, իսկ միւսներն աւելի քիչ։ Դորա համար ս. աւետարանը հետևեալն է պատմում. «Մի մարդ, որ օտար երկիր էր գնում, կանչեց իւր ծառաներին և իւր ունեցածը յանձնեց նորանց։ Եւ մէկին հինգ քանքար տուաւ, միւսին երկու և միւսին մէկ, իւրաքանչիւրին իւր կարողութեան չափ և շուտով գնաց։ Եւ այն հինգ քանքար առնողը գընաց, նորանով բան արաւ և ուրիշ հինգ քանքար էլ շահեց։ Այնպէս էլ նա՝ որ երկուսն առաւ, ուրիշ երկուսն էլ շահեց։ Իսկ այն մէկն առնողը գընաց՝ գետինը փորեց՝ և իւր տիրոջ արծաթը թաղցրեց։ Եւ շատ ժամանակից յետոյ գալիս է այն ծառաների տէրը և նորանցից հաշիւ առնում։ Եւ այն հինգ քանքար առնողը մօտ է գալիս, ուրիշ հինգ քանքար էլ առաջ բերում և ասում. Տէր, ինձ հինգ քանքար տուիր, ուրիշ հինգ քանքար էլ շահեցի նորանց վերայ։ Իւր տէրն էլ ասաց նորան. լաւ ծառայ, բարի և հաւատարիմ, քիչ բաների վերայ հաւատարիմ էիր, քեզ շատ բաների վերայ կը դնեմ, մտիր քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ այն երկու քանքար առնողն էլ մօտ եկաւ և ասաց.

Տէր, ինձ երկու քանքար տուիր, տես, երկու ուրիշ քանքար էլ շահեցի նորանց վերայ։ Տէրն ասաց նորան. լաւ ծառայ, բարի և հաւատարիմ. քիչ բաների վերայ հաւատարիմ էիր, քեզ շատ բաների վերայ կը դնեմ, մտիր քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ այն մէկ քանքար առնողն էլ մօտ եկաւ և ասաց. տէր, ճանաչում էի քեզ, որ դու մի խիստ մարդ ես, հնձում ես, որտեղ որ չես սերմել, և հաւաքում, որտեղ որ չես սփռել։ Եւ վախենալով՝ գնացի, թաղցրի քո քանքարը գետնի մէջ, ահա առ քոնը։ Նորա տէրն էլ պատասխանեց և ասաց նորան. ծառայ չար և ծոյլ, գիտէիր, որ հնձում եմ, որտեղ որ չեմ սերմել և հաւաքում եմ, որտեղ որ չեմ սփռել։ Ուրեմն պէտք էր, որ իմ արծաթը սեղանաւորներին տայիր և ես գալուց՝ տոկոսով կ'առնէի իմը։ Արդ, առէք դորանից քանքարը և տուէք տասը քանքար ունեցողին, որովհետև ամենն ով որ ունի՝ նորան կը տրուի և կաւելանայ, բայց նա, որ չունի՝ նորանից այն ունեցածն էլ վերկառնուի» Մատթ. ԻԵ. 14—30։ Այսպէս ուրեմն այն քահանաները, որոնք իրենց պարտքը սրբութեամբ չեն կատարում, չեն շահագործում Աստուծոյ շնորհած պարգևը, դորանց դատավճիռը նշանակում է ինքը Տէրը։ Դորանց շնորհքը միայն դատաստանի օրը վեր կառնուի և կը տրուի ուրիշ արժանաւորներին, իսկ իրեն դուրս կը ձգեն դրսի խաւարը և այնտեղ կը լինի լաց և ատամների կրճտելը։ Սորանից էլ սարսա-

փելի պատիժ կայ։ Մենք իրաւունք չունինք քահանային դատելու, նա ունի իւր դատաստանը։ Մենք միայն մի բան պիտի անենք, երբէք չը պէտք է կատարենք այն, ինչ որ քահանան է անում, եթէ միայն այդ բանը իւր մէջ յանցանք և արատաւորութիւն է պարունակում։ Սակայն պարտաւոր ենք սրբութեամբ կատարել այն, ինչ որ նա է պատուիրում, քարոզում, որովհետև նա երբէք մեզ վատ բան չի պատուիրիլ, չի ասիլ, այլ այն, ինչ որ Քրիստոսն է նորան պատուիրել, հրամայել ասելու։ Պարտաւոր ենք նորա առաջ անկեղծութեամբ կատարել այն հոգևոր օրէնքները, խորհրդները, ինչ որ հրամայում է եկեղեցին, այլապէս մենք փրկութիւն չունինք, մեր փրկութիւնը նորա միջոցովն է։

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԵՏՈՅՆԻ ՎԵՀՈՒԹԻՒՆԸ։

Աշխարհումս մի մարդ չը կայ, որ իւր պաշտօնով, իւր իրաւունքներով այնպէս բարձր լինի, որպէս քահանան։ Երկրային տէրը կարող է մարդկանց հարստութիւն, պատիւ և ուրիշ բարիքներ պարգևել, որին նորանք աւելի են հակամիտած, բայց քահանան մարդկանց առաջնորդում է դէպի յաւիտենական թագաւորութիւնը, դէպի յաւիտենական երջանիկ կեանքը։ Մինթէ յաւիտենական երջանիկ կեանքից բարձր, որի համար և ստեղծուած է մարդս, կայ և մի ուրիշ աւելի լաւ բան, ոչ։

Երկրային թագաւորները, իշխանները, կառավարիչները և դատաւորները կարող են շղթայել մարդուն և բանտարկել նորան, կարող են մինչև ի մահ տանջել և չարչարել նորան և բանտարկեալը երբ և իցէ կարող է ազատուել իւր կապանքներից և՛ բանտից և՛ իւր չարչարանքներից։ Եթէ բանտում իւր չարչարանքների մէջ էլ նա մեռնի, այնուամենայնիւ միայն մեռնում է նորա մարմինը, հոգին միշտ ազատ է թէ շղթաներից, թէ բանտարկութիւնից և թէ չարչարանքներից, նա անմահ է։ Սակայն քահանայի դատապարտութիւնը, մարդուն շղթայելուց, ոչ ոք չի կարող ազատել նորան, ոչ թագաւորները, ոչ իշխանները, մահն էլ չի կարող ազատել նորա կապանքները, որովհետև քահանան կապում է ոչ թէ մարդու մարմինը, այլ հոգին, իսկ հոգին անմահ է։ Քահանայի դատապարտելը, մարդուն ոչ թէ դէպի բանտն են տանում, այլ դէպի դժոխքը, գեհէնի կրակը. որտեղ դատապարտեալը յաւիտեան պիտի չարչարուի և տանջուի Աստուծոյ ահագին բարկութեան տակ, այդ բաւական չէ և նորանք պիտի մեռնին և երկրորդ յաւիտենական մահով» Հռովմ. Բ. 8—9, Զ. 16, 21 և 23։ Դժոխքի խաւարի աղջամղջի մէջ չար դաղանի և դևերի հետ միասին պիտի ապրեն և պիտի յաւիտեան տանջուին, առանց որ և է հանգստութիւն ունենալու» Մատթ. Իե. 41, Յայտն. Ի. 10։ Տեսնում էք որքան սոսկալի է քահանայի տուած պատիժը։ Այդ

պատիժները նորանք են միայն կրում, որոնք արհամարհում են քահանային և չեն լսում նորան, չեն կատարում Քրիստոսի նորանց տուած պատուէրները և մեռնում են առանց զղջման, առանց ապաշխարութեան և ս. հաղորդութեան արժանանալու։ Սակայն քահանայի տուած պարգևն էլ անհրն է, քաղցր, քնքոյշ և աննկարագրելի։ Նա էլ յաւիտենական է, որ ոչ մի կերպով չի կարելի համեմատել թագաւորների, իշխանների և դատաւորների տուած պարգևների հետ։ Այժմ տեսնում էք քահանան, որպիսի սքանչելի, անպատմելի, սուրբ և վեհ իրաւունքներ ունի, որպիսին չունին ոչ թագաւորները, ոչ իշխանները և ոչ դատաւորները։

Քահանայական պաշտօնի վեհութեանը չեն կարող համեմատուիլ և ծնողներինը։ Իւրաքանչիւր հաւատացեալ քրիստոնիայի համար քահանան պատուով, պաշտօնով աւելի բարձր է կանգնած, քան նորա հարազատ ծնողները։ Ծնողները Աստուծոյ օրհնութիւնով՝ որդիք են բազմացնում, մեծացնում, իսկ քահանաները նորանց բարոյապէս կրթելով, դաստիարակելով՝ առաջնորդում են դէպի յաւիտենական կեանքը։ Յովհան Ոսկեբերանը քահանաների իրաւունքները և պաշտօնը հրեշտակների և հրեշտակապետների իրաւունքներից և պաշտօններից բարձր է համարում։

Քահանայական պաշտօնի վեհութիւնը և սրբութիւնը մենք տեսնում ենք գլխաւորապէս Աս-

տուծոյ սուրբ և անմահ պատարագը մատուցանելիս։ Պատարագի ժամանակ սեղանի վերայ է տնտում անարիւն Զոհը և արարածների Արարիչը, տէրերի Տէրը, թագաւորների Թագաւորը, աստուածների Աստուածը գալիս է և ինքն իրան բաշխւում մեզ համար, առանց սպառուելու։ Քահանան, որ ինքն է մատուցանում պատարագը, ինքն է Տէրին բաշխում մեր մէջ, այդ ժամանակ նորան տեսնելը սքանչելի է։ Նա շրջապատուած երկնային բոլոր զօրքերով, հրեշտակներով, հրեշտակապետներով, Սերովբէներով և Քերովբէներով պատարագ է մատուցանում։ Նորանք ամենքը շրջապատած քահանային, սպասաւորում են նորան, Տիրոջ բաշխուելուն և փառաբանում նորան, Աստուծոյ Որդուն։ Թէև մենք այդ բանը մեր հոգեղէն աչքերով չենք տեսնում, որովհետև անարժան ենք, սակայն ճշմարտութիւնը անբացատրելի է։ Արդեօք մեր եկեղեցին չի երգում. «Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն (հրեշտակները) յաներեւոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով. սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց»։ Պատարագիչ քահանան ինքը չէ բարձրաձայն հրաւիրում ժողովրդին ասելով. «Եւ ընդ Սերովբէն և ընդ Քերովբէն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել» և ժողովուրդը իւր երգիչ-դպիրների բերանով երգում է. «Սուրբ, սուրբ,

սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնութիւն 'ի բարձունս, օրհնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն։ Ովսանա 'ի բարձունս»։ Տեսնում էք, որ ապացուցանելու համար փաստեր չեն հարկաւորւում, որ երկնային բոլոր զօրքերը աներևոյթ կերպով սպասաւորում են քահանայի պաշտօնավարութեանը, Տիրոջ բաշխուելուն։ Եւ ահա ինքն իրան հաստատում է, որ քահանան իւր պաշտօնի Վեհութիւնով որքան բարձր է կանգնած երկնային բոլոր զօրքերից։ Եւ միևնոյնն էլ հաստատում է Յովհան Ոսկեբերանը։ Աշխարհումս մի այնպիսի պաշտօն չը կայ, որ կարելի լինի համեմատել քահանայական պաշտօնի Վեհութեան հետ։ Քահանայական պաշտօնը ամենից վեհ է։

ՔԱՀԱՆԱՅԻՆ ԳԻՏՔ Ի ՎԱՐՁԱՏՐԵԼ.

Քահանան ապրում է իւր ծխականների մէջ. ուսուցանում և քարոզում է նորանց, կատարում է հոգևոր օրինակատարութիւնները և սովորական Աստուածպաշտական ժամերգութիւնը։

Քահանաներն էլ, որպէս ծխականները, ունին կին, որդիք, որոնց հարկաւոր է սնունդ մատակարարել, հագցնել, դաստիարակել և այլն։ Բայց ծխականները ամենքն էլ գործ և արհեստ ունին, որից ստացած աշխատանքով կերակրում են իրենց ընտանիքները և բարոյապէս դաստիարակում իրենց որդկերանց, իսկ քահանաները այդ-

պիսի արհեստներ չունին։ Նորանց գործը հոգևոր է, Աստուածային է և ամեն բան ձրի է կատարում, ինչպէս Քրիստոս է պատուիրել. «Ձրի առել էք և ձրի տուէք» Մատթ. Ժ. 8։ Բայց չէ՞ որ քահանաները և իրենց ընտանիքները հողեղէն են և նորանց ապրուստի միջոցներ են հարկաւոր և այդ ապրուստի միջոցները չէ՞ որ պիտի հոգան ծխականները։ Պողոս առաքեալը այդ մասին գրում է Կորնթացիներին. «Չէք իմանում թէ նորանք, որ տաճարումը գործում են, տաճարիցն են ուտում և նորանք, որ սեղանի պաշտօնեաներ են, սեղանիցն են բաժին առնում» Ա. Կորնթ. Թ. 13։ Մի ուրիշ տեղ նոյն առաքեալը գրում է. «ով է, որ այգի տնկէ և նորա պտղիցը չուտէ. ով է որ հօտ արածեցնէ և հօտի կաթիցը չուտէ» Ա. Կորնթ. Թ. 7։ Այսպէս ուրեմն քահանաները իրենց հօտիցն են ստանում իրենց սնունդ մատակարարող նիւթական վարձատրութիւնը։ Այդ վարձատրութիւնը օրէնքների վճարը չէ, նա ձրի է տրւում (Մատթ. Ժ. 8) և չի էլ կարելի Աստուծոյ առատաձեռն շնորհքը և սահմանադրած օրէնքը ոչ փողով ծախել և առնել, այլ այդ քահանաների նեղութեան վարձն է, «Մշակ արժանի է վարձոյ իւրոյ», (ս. աւետարան) Ա. Տիմոթ. Ե. 18, Բ. Տիմոթ. Բ. 6։ Քահանաները նեղութեան վարձ, իրենց ծխականներից, հաւասար կերպով չեն ստանում, այլ զանազան։ Մի ծխական շատ է վճարում, միւսներն աւելի քիչ և շատերը ոչինչ էլ

չեն վճարում և քահանաները չը նայելով դորան, անխտիր լուռ ու մունջ կատարում են բոլոր հօտի օրէնքները։ Այս այսպէս լինելուց յետոյ, շատ ծխականներ թող չ'օգտուին քահանաների վեհանձնութիւնից և նորանց նեղութեան վարձը չը-կտրեն, այլ որքան կարող են, որքան ներում է իրենց նիւթական միջոցը, աւելի և սուրբ սրտով վճարեն նորանց նեղութեան վարձը, աչքի առաջ ունենալով, որ նորանք միայն այդպիսի միջոցներով են ապրում։ «Մի գիւղում բնակւում էին մի մարդ և մի կին։ Մարդը շատ ժամասէր էր։ Ամեն օր եկեղեցի էր գնում և օրը մի գրոշ էր տալիս իւր քահանային։ Քահանան էլ ամեն օր նորան ասում էր.

—Օրհնուէս դու. բիւրապատիկը քեզ մէկի փոխանակ հազար տայ։

Նա ուրախանում էր և իրան ասում. «Այս լաւ բան է, մէկ տալիս եմ՝ հազար պէտք է տայ»։

Այսպէս ամեն օր մի գրոշ տալով՝ իւր բոլոր ունեցածը տուեց քահանային, իսկ ինքն աղքատացաւ։

Մէկ օր կինն ասաց ամուսնուն.

—Վեր կաց, գնա քահանայի մօտ, մի հազարը բեր, տանք հացի, մինչև որ մէկ էլ հազարն էլ կամաց-կամաց կը տայ։

Ամուսինը գնաց։

—Օրհնեա՛, տէր։

—Աստուա՛ծ օրհնէ։

—Տէրտէր ջան, ես քեզ տուի, դու ինձ հազարներ խոստացար. հիմա բեր մէկ հազարը տուր տանեմ. այն միւսներն էլ՝ յետոյ կը դամ կը տաս։

—Օրհնուած, ասաց քահանան, դու ինձ տուիր, որ Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ։

—Բիւրապատիկն ով է։

Քահանան նորան մի ճանապարհ ցոյց տուեց.

—Այս երկայն ճանապարհովը կը գնաս, քեզ կը պատահի մի մեծ մարդ, որ նստած կը լինի ոսկէ աթոռի վրայ։ Բիւրապատիկը նա է. ասա նորան. «Ինձ մեր տէրտէրն ուղարկեց. մէկ տուել եմ, հազար պէտք է տաս»։

Նա էլ գնաց այն երկար ճանապարհով։ Նորան պատահեցաւ մի քարանձաւ։ Ներս մտաւ և ինչ տեսաւ. քառասուն երեսելի գողեր շարուած նստած են։ Ոսկան պատիւ են տալիս, տեղ են բաց անում և նստեցնում են իրանց մէջ տեղը։

—Ո՞վ ես դու, հարցնում են նորան. այսքան ժամանակ է մեր ահից մարդ չէր եկած այս կողմը. ո՞ր տեղից ես գալիս և ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանում է. մէկ տուել եմ, հազար պիտի ստանամ։

—Գողերն ասում են.

—Եղբայր, այդ խելքը խելք չէ, թող այդ։ Արի այստեղ, մենք քեզ մի բուռը ոսկի տանք, վեր կաց, քո տունը գնա։

—Ո՛չ, ասում է նա, այդ փողը արդար վաստակ չէ։

—Եթէ այդպէս է, ասում են գողերը, դու արդար մարդ ես, երբ գնաս, Բիւրապատիկին հարցրու, թէ միւս աշխարհումը մեզ համար տեղ կայ։

—Աչքիս վերայ, ասում է նա ու գնում։

Գնում է՝ պատահում մի ծերունու, որ նստած էր մի քարի մօտ։ Նա անդադար ասում էր. «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ»։ Եւ որքան ասում էր, այնքան ոսկի էր բղխում քարից։

Ծերունին հարցնում է այս մարդուն.

—Ե՛ղբայր, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ. պատասխանում է նա. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

—Արի այս ոսկուց երկու բուռը տամ, յետ գնա, ասում է ծերունին։

—Ո՛չ, ասում է սա. այդ ո՞չ իմ տուածն է, ո՞չ իմ աշխատածը. ես դորան արժանի չեմ։

—Եթէ այդպէս է, ասում է ծերունին, երբ գընաս Բիւրապատիկի մօտ, հարցրու, թէ ոսկին երբ պէտք է կտրուի այս քարից։

—Աչքիս վերայ, ասում է ու գնում։

Ճանապարհին տեսնում է մի այգեստէր, որ հարցնում է.

—Հողածին, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ. մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ։

—Երբ գնաս, ասում է այգեստէրը, Բիւրապատիկին հարցրու, թէ ինչիցն է՝ որ երբ իմ այգու

պատը չինում եմ, բոլոր կանաչ պտուղները չորանում են, երբ պատը քանդում եմ, կանաչում են։

—Գլխիս վերայ, ասում է նա ու գնում։

Ճանապարհին տեսնում է մի մեծատուն, որի մէջքին պատ էր շարած և ինքը տակին տընքտընքում էր։

—Գիւղակա՛ն, հարցրեց մեծատունը, ո՞ւր ես գնում։

—Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանում է նա, մէկ տուել եմ, հազար պիտի ստանամ։

Մեծատունն ասում է.

—Որ գնաս, Բիւրապատիկին հարցրո՛ւ, թէ ես այս պատից երբ պէտք է ազատուիմ։

—Լաւ կը լինի, ասում է նա և շարունակում իւր ճանապարհը։

Գնում է տեսնում, որ մէկ մեծ մարդ նստած է ոսկէ աթոռի վերայ։

Նա հարցնում է.

—Ո՞ւր ես գնում։

—Բիւրապատիկը դո՛ւ ես, հարցնում է ճանապարհորդը։

—Այո՛, ես եմ, պատասխանում է. ինչ ես ուզում։

—Մեր քահանան ուղարկեց ինձ, ես քեզ մէկ տուել եմ, դու ինձ հազար պիտի տաս։

Բիւրապատիկն ասում է.

—Գնա՛ տունդ, բակիդ մէջ մի թթենի կայ, փորձիր նորա տակը, մի կարաս ոսկի դուրս կը դայ, վեր առ քո մէկի փոխանակ հազարանոցը։

Ճանապարհորդը, բացի դորանից, ինչ որ իրեն յանձնել էին ասելու, ամեն բան ասաց Բիւրապատիկին և ամենի պատասխանն էլ ստանալով՝ վերադարձաւ։

Հասնելով պատի տակ տնքող մեծատան՝ ասաց.

—Դու այդտեղից այն ժամանակ կ'ազատուիս, երբ Աստուծուն մեղայ կը դաս և դիզած հարբստութիւնդ աղքատներին կը բաժանես։

—Ես ինչպէս մեղայ դամ Աստուծուն, ասաց մեծատունը և խօսքը բերանից հանեց թէ չէ՝ իսկոյն պատի հետ միասին գետինը մտաւ։

Նա յետոյ գնաց հասաւ այգեպանը և ասաց.

—Եթէ այդուղ պատերը քանդես, որ անց ու դարձ անողներն ուտեն պտուղներից, այդիդ կը կանաչի։

Դեռ խօսքը բերանումն էր, իսկոյն տէրը գնաց պատերը քանդեց և այդին կանաչեց։

Ճանապարհորդը գնալով ծերունու մօտ, ասաց.

Քանի որ դու բերանիցդ Աստուծու անունը չես պակասեցնիլ, քարիցն էլ ոսկին չի պակասիլ։

Ծերունին ասաց.

—Մի՛թէ մարդ իւր բերանից Աստուծու անունը կը պակասեցնի. փառք Աստուծուն։—Ասաց չասաց՝ քարի միւս երեսիցն էլ ոսկի դուրս թափուեցաւ՝ առաջուանից շատ։

Նա եկաւ գողերի քարանձաւը և նորանց ասաց.

—Եթէ ձեր գողութիւնը թողէք, միւս աշխարհումը տեղ ունիք։

Գողերը թողին քարանձաւը, գնացին իրանց յանցանքն ապաշխարեցին ու փրկուեցան։

Վերջապէս մեր ճանապարհորդն եկաւ իրանց տուն, կանչեց կնոջն ու ասաց.

—Ա՛յ կին, բահ ու թի բեր։

Մարդ ու կին վեր առան բահն ու թին, փորեցին թթենու տակը և մի կարաս գտան ոսկով լիքը։ Օրը մթնեց և կարասը թողին, որ առաւօտը հանեն։

Դրացիներն իմացան, գիշերը եկան կարասը գողանալու, բայց տեսնելով որ մէջը դեղին հող է, կարասը շուռ տուին տան տիրոջ այգումը։ Կարասը կոտրուեցաւ ու հողը ցրուեցաւ։

Առաւօտը զարթեցան, ինչ տեսան. այգու չորս կողմը ոսկի է փռուել։ Ամուսինը գոռաց.

—Ա կնիկ, ցախաւելը բեր. բոլոր այգին ոսկի է դառել։

Աւելեցին շողշողուն ու զընգզընգան ոսկիքը. մէկի փոխանակ ոչ թէ հազար, այլ անթիւ հազարներ ստացան, հարստացան և Աստուծուն փառք տուին» [1])։ Մարդ իւր քահանայի կրած նեղութեան վարձը այնպէս պիտի տայ, որպէս գիւղականը և օրհնութիւն ստանայ։ Քահանային տուած տուրքը Աստուծունն է և քահանային տուածի փոխարէն, Աստուած էլ հատուցանում

[1]) Սրուանձտեան։

է տուողին։ Այդ պատճառաւ է, որ Տէրը հրամայում է. «Տուք և տացին ձեզ»։

ՔԱՀԱՆԱՅԻՆ ՊԻՏՔ Է ՏԱՐԳԵԼ ԵՒ ՊԱՏՈՒԵԼ։

Քահանաների իրենց վեհ պաշտօնի և մեզ համար կատարելիս հոգացողութեան համար, մենք պարտաւոր ենք նորանց յարգել և պատուել։ Քահանան մեր հոգևոր հայրն է, նա է առաջնորդում մեզ դէպի փրկութիւնը։ Եթէ մենք յարգում և պատուում ենք մեր մարմնաւոր հօրը, այդ առաւել պիտի ցոյց տանք մեր հոգևոր հօրը։ Եթէ մենք յարգում ենք և պատուում թագաւորներին, իշխաններին, դատաւորներին, կառավարիչներին, մեծաւորներին, բարերարներին և այլոց, որոնք մեզ ժամանակաւոր բարիք են մատուցանում, ապա այդ առաւել պէտք է անենք նորանց, որոնք մեզ յաւիտենական բարիք են մատուցանում։ Նորանց համար շատ վատ է, որոնք դէպի քահանան յարգանքով և պատուով չեն վերաբերուում։ 1893 թուում Ղարաբաղու վիճակի Ն. Գիւղում պատահել է հետևեալ տխուր անցքը։ Գիւղի քահանան վաղեմի սովորութիւնների համաձայն խաչ-աւետարանով գնում է իւր մի ժողովրդականի կալը օրհնելու։ Կալատէր ժողովրդականը փոխանակ ուրախութեամբ ընդունելու քահանային, յիշոցներ է տալիս և յետ դարձնում իւր կալից։ Քահանան տխուր-տրտում վերադառնում է տուն և անցքը պատմում իւր շրջապատողներին։ Իրողութիւնը

բոլորին էլ տխրեցնում է։ Երկրորդ օրը քահանային անպատուող ծխականը խելագարւում է, ընկնում գիւղի փողոցները, անտառները։ Խելագարին ներկայացնում են բժշկներին, որոնք պատուիրում են տանից դուրս չը թողնել նորան։ Անցնում են ամիսներ և խելագարը չի բժշկւում։ Դեղ, դարման, գրբաց, փալչի, կուռն չափող, դեղը բռնող ոչ մի բան նորան չի օգնում։ Խելագարը օր աւուր նիհարում է, ոչ ուտում է, ոչ խմում և ոչ քնում, մօտենում է նորա օրհասական վախճանը։ Կինը, որդիքը շրջապատած նորան աղիողորմն արտասուք են թափում, մատաղ անում, դարձեալ ոչինչ չի օգնում։ Վերջապէս գիւղացիները խորհուրդ են տալիս հիւանդի շրջապատողներին կանչել անպատուած քահանային, նորա կողմից ներողութիւն խնդրել և աղաչել նորան թողութիւն տալ գործած յանցանքին, ապա աղօթել Աստուծուն և բժշկութիւն խնդրել։ Այդպէս էլ կատարւում է։ Հիւանդը մի քանի օրից յետոյ խելքի գալով՝ բոլորովին բժշկւում է և այնուհետև դառնում է պարկեշտ և խոնարհ քրիստոնեաների մէկը և սկսում պատւով և յարգանքով վերաբերուել դէպի քահանան։ Այսպիսով իւրաքանչիւր հաւատացեալ պարտաւոր է քահանային այնպիսի յարգանքով և պատւով վերաբերուել, որպէս-թէ Աստուծուն է անում այդ բանը։ Չէ՞ որ այդ բանը հէնց ինքը Քրիստոսն է պատուիրում. «Ով որ ձեզ է լսում կամ պատւում, ինձ է լսում.

և պատւում» Ղուկ. Ժ. 16։ Ուրեմն այդ պատուասիրութիւնը դարձեալ Քրիստոսի հրամանովն է։ Մի շատ յիմար նախապաշարմունք էլ է մտած շատերի մէջ։ Այդ նախապաշարուածներից շատերը աշխատում են փողոցներում կամ զբօսնելիս քահանայի չը հանդիպել, առարկելով՝ որ այն օրը իրենց բանը չի յաջողուիլ, կամ մի որ և է անբաղդութիւն կը պատահի։ Այս բոլորը տհաս խելքի արտադրութիւն է։ Աշխարհումս առանց Աստուծոյ կանխագիտութեան ոչինչ չէ կատարւում։ Առանց Աստուծոյ կամքի փոքրիկ թռչունը չի մեռնում, առանց Աստուծոյ գիտութեան մարդու գլխից մի մազը և ծառից մի տերևը չի ընկնում, ապա ուրեմն ինչպէս կարող ենք աշխարհումս պատահած փորձութիւնները վերագրել քահանային։ Եւ Աստուած երբէք թոյլ չի տալ, որ իւր սպասաւորը քահանայի մարդկանց պատահելովը, նորանց երկրային որ և է վնաս հասնի։ Եթէ արդարև հէնց միևնոյն օրը քահանային պատահած մարդուն որ և է անբաղդութիւն է հանդիպում, մի՞թէ այդ բանում յանցաւորը քահանան է, կամ նորանց իրար պատահելը, չէ՞ որ այդ բանը Աստուծոյ կամքովն է կատարւում։ Աշխարհումս պատահած բոլոր փորձութիւնները կատարւում է Աստուծոյ բարեհաճ կամքով և այդ բանը վերագրել քահանային կամ նորա պատահելուն, աւելի քան նախապաշարմունք է և թերահաւատութիւն։

Ընթերցող եղբայր, քահանան մեր հոգևոր հայրն է, մեզ մկրտողը, մեղքերի թողութիւն տուողը, մեզ պսակողը, սրբութիւն տուողը, օրհնողը և դէպի յաւիտենական կեանքն առաջնորդողը, ապա ուրեմն՝

Ե՛կ պատուենք, այդ սուրբ քահանան,
Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վերայ,
Պատրաստ հսկում է անքուն աչքերով։

ՎԵՐՋ.